

Քրիստոնեաները Լաթրունի մէջ շինած էին եկեղեցի մը ի պատիւ Ս. Դեմասի, Աւետարանի բարի Աւագակը (\*), ըստ աւանդութեան: Խաչակիրները հոն շինեցին հաստատուն գղեակ մը՝ Castellum boni Latronis անունով: Պարագաներէն դիտելով կը հասկցուի թէ Դեմասը Լաթրունէն էր: «Որ ասի յոմանց գոլ բնակութիւն բարի աւագակին Դեմասայ» (Հան. էջ 71):

Պէյր ձեռնարկ է հաւանաբար Կափարգամաղան, որ Երուսաղէմէն 20 մղոն հեռու էր, և ուր կը բնակէր Սինէտրիոնի նշանաւոր անդամ Գամաղիէլը որ սուրբ Ստեփանոսի մարմինը թաղեց իր ազարակին մէջ: Գըրած ենք արդէն (էջ 138) Ս. Ստեփանոսի մարմինին գիւտը և նշխարներու փոխադրութիւնը: Դարեր անցնելով մոռցուած էր Ս. Ստեփանոսի գերեզմանին տեղը Կափարգամաղայի մէջ զոր կը նկարագրէ Ղուկիանոս երէցը 315 ին: 1891 ին միայն քրիստոնեաներու ձեռքը անցաւ նոյն Պէյթ ձէմալ գիւղը՝ ուր գիտնականներու կողմէ խուզարկութիւններ կատարուեցան գտնելու համար Ս. Ստեփանոսի մատուռը: Նշանաւոր

---

(\*) Քրիստոնէութեան նախնական թուականներուն բարի աւագակի մասին գրուածքներ կան. թէեւ անոնք վաւերական չեն, բայց կը պարունակեն կարեւոր գիտելիքներ. այսպէս աջակողմեան աւագակին մէկ աւանդութիւնը որ կը յիշատակուի «Մանկութեան Աւետարանին» մէջ (սե'ս Brv.) կ'աւանդուի թէ Ս. րնսանիք եգիպտոս փախչելու ժամանակ զողերու ձեռք ինկաւ. անոնցմէ մին որ Դեմաս կը կոչուէր, աւագակապետի մը զաւակը, Յիսուս Մանուկին ասուածային տեսիլէն հմայուած՝ արգիլեց որ անոր ծնողքին չի վնասուի, եւ հարկ եղած հետեւորդները ընկերացուց՝ անապատէն անցնելու համար: Դեմաս հեթանոս էր եւ եգիպտացի: Ըստ Ս. Ոսկեբերանի, ան պիտի ըլլար Գողգոթայի վրայ պատկերը հեթանոսութեան, մինչ Կեսղաւոր՝ անապատու աւագակը՝ պիտի ներկայացնէր հրեաները» (Mis. Բ. էջ 198):